ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

## ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ (ԿԱՄԱՎՈՐ) ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման քննության թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, պատասխանի գնահատման չափանիշները և պատասխանների՝ ձևաթղթում լրացման կարգի բացատրությունները, առաջադրանքներից բացառվող լեզվական իրողությունները, առաջադրանքների կազմման համար որպես գիտական հիմք ծառայող գրականության ցանկը, պատասխանների ձևաթուղթը:

## ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 30 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 70 միավոր: Բովանդակային առումով թեստում առկա են լեզվի 4 հիմնական բաժիններից (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն) և գործնական գիտելիքներ ստուգող առաջադրանքներ, և տեսական պնդումներ: Կառուցվածքային առումով առաջադրանքները ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով: Կարճ պատասխանով առաջադրանքները 2 տեսակի են՝

- 1-ին տեսակ.
  առաջադրանքի պահանջին համապատասխանող լեզվական միավորների համարների նշում. ճիշտ պատասխանին (եթե ճիշտ են նշված բոլոր համարները) տրվում է 1 միավոր (ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում), ենթաառաջադրանքներ ունեցող առաջադրանքների դեպքում յուրաքանչյուր ենթաառաջադրանքի պահանջին համապատասխանող լեզվական միավորների համարների նշում. ճիշտ պատասխաններին (եթե ճիշտ են նշված տվյալ ենթաառաջադրանքի պահանջին համապատասխանող բոլոր համարները) տրվում է 1-ական միավոր (ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում),
- 2-րդ տեսակ.
  լեզվական միավորների տրված քանակից պահանջին համապատասխանում են որևէ 3-ը. դրանցից յուրաքանչյուրի համարի ճիշտ նշման դեպքում միավոր է տրվում. այսպիսով, տվյալ առաջադրանքներից հնարավոր է վաստակել առավելագույնը 3 միավոր:

## ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԻ ՄԱՍԻՆ

Թեստային առաջադրանքները կազմվում են հանրակրթական դպրոցների ծրագրային նյութի հիման վրա՝ բացառելով ստորև նշվածները.

**ուղղագրությունից և ուղղախոսությունից՝**

1. ուղղագրական զուգաձևությունները
2. բաղաձայնների և երկհնչյունների արտասանությունը
3. օտար ծագմամբ հասարակ և հատուկ անունների շեշտադրությունը
4. տողադարձը

**բառագիտությունից՝**

1. մենիմաստ և բազմիմաստ բառերի տարբերակումը
2. նույնարմատ և համահունչ համանունները
3. խոսակցական, հազվադեպ գործածվող, հնացած, դիպվածային, կեղծ գրական բառերը, հասարակաբանությունները
4. քարացած ածանցները
5. իսկական և կցական բարդությունների տարբերակումը
6. համառոտագրությունը

**ձևաբանությունից՝**

1. սեռական հոլովը տրականից (բացի դերանվանական հոլովումից) և հայցականը ուղղականից և տրականից տարբերակումը
2. որակական և հարաբերական ածականների տարբերակումը
3. արգելական հրամայականի զուգաձևությունները
4. երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը
5. վերաբերականների տեսակների տարբերակումը՝ բացի հաստատական, ժխտական, երկբայական, սաստկական, սահմանափակման տեսակներից

**շարահյուսությունից՝**

1. առդրությունը
2. համասեռ և տարասեռ որոշիչների ճանաչումը, դրանց տարբերակումը և կետադրումը
3. սեռականով որոշչի տարբերակումը հատկացուցչից
4. վերաբերականների տրոհումը՝ բացի հանրահայտ և ակնհայտ դեպքերից
5. կետադրական զուգաձևությունները

## ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Միևնույն առաջադրանքի համարի տակ մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0:

Կարճ պատասխանով առաջադրանքներից և ենթաառաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համարին կամ համարներին համապատասխանող վանդակներում հարկավոր է դնել X նշանը:

Կարճ պատասխանով 2-րդ տեսակի առաջադրանքների դեպքում տվյալ առաջադրանքի համարի դիմացի վանդակներում չի կարելի կատարել 3-ից ավելի նշում. ցանկացած 4 և ավելի նշում ունենալու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են որևէ 1, 2 կամ 3 նշումներ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ


1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների համար հայոց լեզվի երաշխավորված և գործող դասագրքեր
2. Բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողների համար երաշխավորված դասագրքերից՝
   - Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Եր., 1989
   - Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու (Ձևաբանություն), Եր., 2002
   - Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու (Բարդ նախադասություն), Եր., 2002
3. Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (բացառապես իմաստաբանության առումով՝ բառի բացատրություն, հոմանշության կամ հականշության հնարավորություն, համանունություն), Եր., 1976
4. Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975


**Ծանոթություն:** Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար:

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ

2023թ. Ուսուցչի առարկայական գիտելիքի ստուգում
*Պատասխանների ձևաթուղթ*
*Հայոց լեզու*

ազգանուն

անուն հայրանուն

ԳԹԿ անձնական համար

01

Թեստ № 1 ☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 1 |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 2 |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 3 |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 4 |

Պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի

☐☐

1 ☐
2 ☐
3 ☐
4 ☐

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

1-ին տեսակ

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 12. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 13. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 14. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 15. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 16. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 17.1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 17.2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 17.3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 17.4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 17.5 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 17.6 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 17.7 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 17.8 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 17.9 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 18.1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 18.2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 18.3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 18.4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 18.5 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 18.6 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 18.7 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 18.8 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 18.9 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

2-րդ տեսակ

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 20. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 21. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 22. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 23. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 24. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 25. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 26. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 27. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 28. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 29. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 30. | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

2 տեսակի համար

| Համար | Պատասխան 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ☐☐.☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| ☐☐.☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

*Արտագրեք այս նախադասությունը՝* *Ծանոթ եմ ուսուցչի առարկայական գիտելիքի ստուգման աշխատակարգին:*